



«Հաստատում են»
ՀՖՖ Առաջին փոխնախագահ,
գործադիր տնօրեն

Ա. Մինասյան
01.12.2012

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀՀ ՖՈՒՏՉԱԼԻ 2012թ Մ-14 ՄՐՑԱՇԱՐԻ**

Հոդված 1. Կարգավորման շրջանակները

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է:
 - ՀՖՖ-ի կողմից անցկացվող ֆուտզալի պատանեկան մրցաշարի կազմակերպման և անցկացման գործընթացը,
 - մրցաշարին մասնակցելու կարգը և պահանջները,
 - մրցաշարին մասնակցող ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պատասխանատվությունն ու իրավահա-րաբերությունները:

Հոդված 2. Մրցաշարի նպատակը

1. Նպաստել երեխաների ֆիզիկական պատրաստականության բարձրացմանը:
2. Նպաստել պատանեկան ֆուտզալի հետագա զարգացմանը:

Հոդված 3. Մրցաշարի ղեկավարումը

1. Մրցաշարի ղեկավարումն իրականացնում է ՀՖՖ-ն, որը մասնավորապես
 - հաստատում է մրցաշարի կանոնակարգն ու խաղացանկը,
 - իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
 - կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
 - ամփոփում և հաստատում է մրցաշարի արդյունքները,
 - իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,
 - իրականացնում է այլ գործառույթներ:
2. Մրցաշարին կարող են մասնակցել այն կազմակերպությունների, մարզադպրոցների, մարզակումբների /այսուհետ՝ Ակումբներ/ թիմերը, որոնք ընդունում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖ-ի, ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները և պարտավորվում են կատարել վերոհիշյալ մարմինների և սույն կանոնակարգի պահանջները:

3. Մրցաշարին ցանկացող մասնակցել Ակումբները գրավոր հաստատում են իրենց մասնակցությունը մինչև ա/թ հոկտեմբերի 01.12.2012-ը ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի հավաստագիր:

Հոդված 4. Մրցաշարի անցկացման կարգը

1. Խաղերն իրականացվում են համաձայն <<ֆուտզալի խաղի կանոնների>:
2. Մրցաշարը անցկացվում է 2 շրջանով /թիմերը հանդիպում են միմյանց հետ սեփական և մրցակցի մարզադահլիճներում/:
3. Մարզադահլիճները պետք է ընդունված լինեն ՀՖՖ-ի կողմից:
4. Հանդիպումն, խաղացանկով հաստատված մարզադահլիճի փոխարեն, այլ մարզադահլիճում անցկացնելու անհրաժեշտության դեպքում հյուրընկալող Ակումբը պարտավոր է գրավոր դիմել ՀՖՖ, հանդիպումից ոչ ուշ քան 2 օր առաջ:
5. Ակումբը պատասխանատվություն է կրում ֆուտբոլիստների առողջական վիճակի համար և պարտավոր է կազմակերպել յուրաքանչյուր մասնակից ֆուտբոլիստի բժշկական զննումը:

Հոդված 5. Թիմերի դասակարգումը մրցաշարային աղյուսակում

1. Թիմերը գրաված տեղերը մրցաշարում որոշվում է ըստ վաստակած միավորների՝ հաղթանակի համար 3 միավոր, ոչ ոքի համար 1 միավոր, պարտության դեպքում միավոր չի տրվում:
2. Երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է այն թիմին, որը հավակնորդ թիմերի հետ խաղերում՝
 - 2.1 վաստակել է ավելի շատ միավոր,
 - 2.2 ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն:
 - 2.3 վիճակահանությամբ:

Հոդված 6. Խաղերի կազմակերպումը և ֆուտբոլիստների մասնակցությունը

1. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ քան 35 րոպե առաջ խաղի լրացված ու ստորագրված արձանագրությունը և մասնակիցների քարտերը հանձնել մրցավարական խմբին: Քարտերը վերադարձվում է ներկայացուցիչին խաղից հետո:
2. Մարզադահլիճում բժշկական օգնության և խաղի մասնակիցների անվտանգության ապահովման պատասխանատվությունը կրում է հյուրընկալող Ակումբը:
3. Խաղասկզբին՝ բուժձառայության /բժիշկի/, ոստիկանության աշխատակիցների համապատասխան թվակազմի /համազգեստով/ բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:
4. Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու իրավունք ունեն միայն արձանագրությունում նշված անձինք:
5. Թիմը համարվում է խաղին «չներկայացած» եթե չի տեղեկացրել մրցավարին ուշացման փաստի մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում կարող է խաղասկիզբը հետաձգվել ոչ ավելի քան 30 րոպե:
6. Խաղի արձանագրությունում լրացվում են ոչ ավելի քան 12 ֆուտբոլիստ և 3 պաշտոնյայի տվյալները: Արձանագրությունում նշվում են այն ֆուտբոլիստների և պաշտոնյաների

անունները որոնք ունեն տվյալ մրցաշարի մասնակցի անձնական քարտ (հայտավորվաց են):

7. Չհայտավորված, որակագրված, արձանագրությունում չնշված ֆուտբոլիստին խաղին մասնակից դարձնելու պատասխանատվությունը կրում է Ակումբը անկախ ֆուտբոլիստի խաղին մասնակցելու ջամանակահատվածից:
8. Մրցաշարի խաղերին դարպասացանցերը պարտադիր են: Պատշաճ դարպասացանցեր չլինելու դեպքում խաղը չի կայանա:

7. Խաղերի սպասարկման իրականացումը

1. Խաղերի անցկացման համար ՀՖՖ-ի մրցավարական բաժինը նշանակում է սպասարկող խումբ՝ մրցավար, 2-րդ մրցավար, 3-րդ մրցավար:
2. Յուրաքանչյուր խաղից 1 ժամ առաջ հանդիպման մրցավարի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն , որին մասնակցում են խաղը սպասարկող մրցավարական խումբը, մրցակից թիմերի ներկայացուցիչները, ոստիկանության ներկայացուցիչը: Ոստիկանության ներկայացուցչի մասնակցությունը նախախաղային խորհրդակցությանը ապահովում է հյուրընկալող Ակումբը:
3. Մարզահագուսի գույները համընկման դեպքում մարզահագուստը փոխում է հյուրընկալող /դաշտի տեր/ թիմը:
4. Սպասարկող խմբին արգելվում է խաղին մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից թիմերից որևէ մեկի հետ:
5. Մրցավարը պատասխանատու է արձանագրությունում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության քարտերի իսկության և ֆուտբոլիստների ինքնության համար:
6. Նախախաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը և տեսուչը պարտավոր են ստուգել խաղահրապարակը: Խաղը անցկացնելու վերջնական որոշումը, կապված խաղահրապարակի վիճակի հետ, կայացնում է մրցավարը:
7. Մրցավարը պարտավոր է կատարել խաղի կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր գործառույթները:
8. Խաղից հետո մրցավարը պարտավոր է արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ ոչ ուշ քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00:
9. Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը , խաղից հետո տեղի ունեցած արտակարգ դեպքերի մասին մրցավարական խմբի անդամները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել զեկուցագրեր ոչ ուշ քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:
10. Խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն մրցավարն է: Որևէ թիմի խաղից ուշանալու, ինչպես նաև կազմակերպչական խոչընդոտների պարագայում, խաղասկզբի և խաղի անցկացման վերաբերյալ որոշումը կայացնում է մրցավար է:
11. Մրցավարը պարտավոր է խաղի վերաբերյալ բողոքարկման պաշտոնական հայտարարության դեպքում, խաղից անմիջապես հետո տեղեկացնել մրցակից թիմին:
12. Մրցող թիմերը տեխնիկական գոտում պետք է ներկայացված լինեն հայտավորված պաշտոնյաներով: Առանց թիմի պատասխանատու պաշտոնյայի խաղը չի անցկացվում:

Հոդված 8. Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը

1. Թույլատրվում է հայտավորել 3 ղեկավար և մինչև 20 ֆուտբոլիստ՝ ծնված 1999-2000թթ.:

2. Մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է 10 օր և ավարտվում է 2 օր մրցաշարը սկսելուց առաջ:
3. Մրցաշարը սկսելուց հետո թիմի ֆուտբոլիստների կազմում փոփոխությունները կատարվում են վերահայտավորման միջոցով՝ յուրաքանչյուր վերահայտավորվող ֆուտբոլիստի համար 500 դրամ մուծելու դեպքում:
4. Մասնակիցների հայտավորման, վերահայտավորման համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված թերթիկը:
5. Թերթիկում պարտադիր լրացման ենթակա են՝
 - ա. Ակումբի անունը,
 - բ. Հայտավորվող ֆուտբոլիստների ցուցակը / այդ թվում՝
 - անձնական համարը ըստ ՀՖՖ-ի գրանցման
 - ազգանունը, անունը
 - հայտավորման ենթակա պաշտոնյաների ցուցակը /երկրորդ մասում/, այդ թվում, բացի նախորդ 2 կետերից, լրացվում է նաև անձի պաշտոնը ակումբում /թիմում/
 - գ. Ակումբի, ղեկավարի ազգանունը ստորագրությունը՝ կնքված ակումբի կնիքով, հայտի ՀՖՖ ներկայացման ամսաթիվը:
 - դ. Թերթիկը պետք է լինի հստակ ընթերցելի, ցանկալի է մեքենագրված:
6. Ակումբի պաշտոնյաների վերահայտավորումը անվճար է:

Հոդված 9. Պարգևատրում

1. Առաջին տեղը գրաված թիմին շնորհվում է “մրցաշարի հաղթողի” կոչումը: Թիմի ֆուտբոլիստները, ղեկավար կազմը պարգևատրվում են հուշադիպլոմներով:
2. Երկրորդ և երրորդ տեղերը գրաված թիմերը, ֆուտբոլիստները, ղեկավար կազմը պարգևատրվում են հուշադիպլոմներով:
3. Մրցաշարի ումբարկուն և լավագույն ֆուտբոլիստը պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով և հուշանվերներով: Մրցաշարի լավագույն ֆուտբոլիստը ընտրվում է ՀՖՖ լրատվական ծառայության հարցման միջոցով:

Հոդված 10. Այլ դրույթներ

1. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշարի ավարտը:

ՄԿԱ Բաժնի ֆուտզալի և կանանց ֆուտբոլի բաժանմունք